

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՈՒԼԻՍ

ՔԻՄԻԱ

ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՞ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը իննայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեսու-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեսու-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Ի՞նչ է արտահայտում նյութի պարզագույն բանաձևը.

- 1) ատոմների միացման կարգը մոլեկուլում
- 2) մոլեկուլում ատոմների թվերի նվազագույն հարաբերություն
- 3) ատոմների թիվը մոլեկուլում
- 4) մոլեկուլում ատոմների թվերի ցանկացած հարաբերություն

2 Հետևյալներից ո՞րն է քիմիական երևույթ.

- 1) թթվածից և ջրածնից բաղկացած խառնուրդի ծավալի ընդարձակումը՝ այն տաքացնելիս
- 2) սուբլիմացումը
- 3) պղտորության անհետացումը, եթե թարմ ստացված կալցիումի կարբոնատի սուսպենզիայի մեջ անցկացվում է ածխաթթու գազ
- 4) ջուրը սառուցի վերածվելիս ծավալի ընդարձակումը

3 Ո՞ր շարք է ներառված $1s^2 2s^2 2p^6 3s^2 3p^6 3d^{10} 4s^1$ էլեկտրոնային բանաձևն ունեցող տարրի կարգաթիվը, ավարտված էլեկտրոնային թաղանթների թիվը և առավել հաճախ հանդիպող օքսիդացման աստիճանի թվային արժեքը համապատասխանաբար.

- 1) 30, 3, 1
- 2) 29, 1, 2
- 3) 29, 2, 2
- 4) 29, 3, 2

4 Համապատասխանեցրե՛ք նյութի բանաձևը դրա մոլեկուլում σ -կապերի թիվը և մոլեկուլի էլեկտրոնային բանաձևում պատկերված չընդհանրացված էլեկտրոնային զույգերի թիվը.

Նյութի բանաձև	σ -կապերի թիվ	Էլեկտրոնային զույգերի թիվ
ա) CH ₄	1) 7	Ա) 1
բ) CH ₃ CHO	2) 2	Բ) 2
գ) H ₂ S	3) 3	Գ) 3
դ) NH ₃	4) 4	Դ) 4
	5) 6	Ե) 0


Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա5Դ, բ1Գ, զ2Բ, դ3Ա
- 2) ա4Ե, բ5Բ, զ2Բ, դ3Ա
- 3) ա4Ե, բ5Բ, զ4Ա, դ2Բ
- 4) ա2Բ, բ5Դ, զ2Գ, դ2 Բ

5 Հետևյալ քիմիական բանաձևերն ունեցող ո՞ր երկտարր միացության մեջ մասնիկներն ունեն նույն հեկտրոնային բանաձևը.

- 1) Mg₂Si
- 2) CaBr₂
- 3) LiCl
- 4) Na₃N

6 Հետևյալ փոխարկումներից որո՞նք են համապատասխանում վերականգնման գործընթացի.



- 1) Բ, դ, է
- 2) ա, բ, զ, է
- 3) ա, բ, է, զ
- 4) բ, զ, է, զ

7 Քլորաջրածնի 0,1 մոլ/լ կոնցենտրացիայով 5 մլ ջրային լուծույթին ավելացրել են նատրիումի հիդրօքսիդի նույն կոնցենտրացիայով 5 մլ լուծույթ։ Ի՞նչ գույն կունենա լակմուսը ստացված վերջնական լուծույթում.

- 1) կապույտ
- 2) անգույն
- 3) կարմիր
- 4) մանուշակագույն

8 Համապատասխանեցրե՛ք նյութի ոչ կանոնական անվանումը քիմիական բանաձևի և բյուրեղավանդակի տեսակի հետ։

Նյութի ոչ կանոնական անվանում	Քիմիական բանաձև	Բյուրեղավանդակի տեսակ
ա) գետի ավազ բ) կերակրի աղ զ) ոսկի դ) «չոր սառույց»	1) CO ₂ 2) SiO ₂ 3) NaCl 4) Au	Ա) մոլեկուլային Բ) մետաղային Գ) ասումային Դ) իոնային

Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճշշտ.

- 1) ա2Գ, բ3Դ, զ4Բ, դ1Ա
- 2) ա4Գ, բ1Գ, զ1Դ, դ4Բ
- 3) ա2Գ, բ1Դ, զ4Բ, դ3Գ
- 4) ա2Ա, բ3Ա, զ2Գ, դ1Ա

9 Ո՞ր նյութի մոլեկուլում է առկա դրուրակցեպտորային մեխանիզմով առաջացած կովալենտային կապ.

- 1) ծծմբաջրածնի
- 2) էթանի
- 3) ամոնիումի հիդրօքսիդի
- 4) ամոնիակի

10 Ո՞ր նյութի լուծույթի և Fe_2O_3 -ի միջև փոխազդեցությունը չի արտահայտվի
 $\text{Fe}_2\text{O}_3 + 6\text{H}^+ = 2\text{Fe}^{3+} + 3\text{H}_2\text{O}$ կրճատ իոնային հավասարմամբ.

- 1) H_2SO_4
- 2) HCl
- 3) HNO_3
- 4) CH_3COOH

11 Որքա՞ն է հիդրօքսիդ իոնների մոլային կոնցենտրացիան (մոլ/լ) 0,2-ական մոլ NaOH , LiOH , $\text{Ba}(\text{OH})_2$ պարունակող 800 մլ լուծույթում (ալկալիները լրիվ են դիտցված).

- 1) 0,8
- 2) 0,6
- 3) 0,4
- 4) 1,0

12 Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ $2\text{N}_{2(g)} + \text{CO}_{2(g)} \rightleftharpoons \text{C}_{(s)} + 2\text{N}_2\text{O}_{(g)} - Q$ ռարձելի ռեակցիայի հավասարակշուրջյան տեղաշարժի վերաբերյալ.

- 1) ճնշումը իջեցնելիս, և ջերմաստիճանը բարձրացնելիս հավասարակշուրջյունը կտեղաշարժվի դեպի աջ
- 2) ջերմաստիճանը իջեցնելիս և ճնշումը մեծացնելիս հավասարակշուրջյունը կտեղաշարժվի դեպի ձախ
- 3) և՝ ճնշումը, և՝ ջերմաստիճանը բարձրացնելիս հավասարակշուրջյունը կտեղաշարժվի դեպի աջ
- 4) և՝ ճնշումը, և՝ ջերմաստիճանը իջեցնելիս հավասարակշուրջյունը կտեղաշարժվի դեպի աջ

13 Կերակրի աղի ջրային լուծույթի մեջ ընկդմել են յուրաքանչյուրն *a* գրամ զանգվածով իներտ հեկտրոդներ և լուծույթը ենթարկել հեկտրոլիզի: Որոշ ժամանակ անց իներտ կաթոդը հանել են, լվացել, չորացրել և նորից կշռել, որից հետո զանգվածը կազմել է *b* գրամ: Ի՞նչ փոխարարքերության մեջ են *a*-ն և *b*-ն.

- 1) $a > b$
- 2) $a - b < 0$
- 3) $a >> b$
- 4) $a = b$

14 Զրածնի և թթվածնի հավասար ծավալներով խառնուրդին ո՞ր գազը պետք է ավելացնել նույն խտությամբ նոր զագային խառնուրդ ստանալու համար.

- 1) NH_3
- 2) C_2H_6
- 3) SO_2
- 4) H_2

15 Հետևյալ նյութերից որո՞նք են փոխազդում ալկալիների հետ՝ երկու տարբեր թթուների աղեր առաջացնելով.

- | | |
|------------------|-------------------------|
| ա) Cl_2 | դ) N_2O |
| բ) CO_2 | ե) CO |
| գ) NO_2 | զ) SiO_2 |

- 1) ե, զ
- 2) ա, զ
- 3) ա, բ
- 4) զ, դ

16 Ստորև բերված ռեակցիաներից որի՞ դեպքում է արագությունը հաշվարկվում $v = k[\text{O}_2]$ բանաձևով.

- 1) $2\text{H}_2 + \text{O}_2 = 2\text{H}_2\text{O}$
- 2) $\text{N}_2 + \text{O}_2 = 2\text{NO}$
- 3) $\text{S} + \text{O}_2 = \text{SO}_2$
- 4) $2\text{CO} + \text{O}_2 = 2\text{CO}_2$

(17-18) Տրված են մետաղների հետևյալ շարքերը

- ա) Zn, Be, Ag
- բ) Ca, Fe, Pt
- զ) Zn, Al, Na
- դ) Hg, Cu, Ni

17

Ո՞ր շարք ներառված բոլոր մետաղներն են օքսիդանում H^+ իոններով.

- 1) զ
- 2) դ
- 3) ա
- 4) բ

18

Ո՞ր շարք ներառված մետաղներն են դասավորված ջրային լուծույթներում դրանց ակտիվության նվազման կարգով.

- 1) զ
- 2) դ
- 3) ա
- 4) բ

19

Նիկել և ցինկ մետաղների զույգը թթվի հետ հայելիս ո՞ր էրևույթն է ընթանում.

- 1) ցինկը վերականգնվում է
- 2) անջատվում է թթվածին
- 3) ցինկը լուծվում է
- 4) նիկելը լուծվում է

20

1մոլ քանակությամբ ո՞ր նյութի դիսուլվացիա են առաջանում առավել մեծ քանակությամբ PO_4^{3-} իոններ.

- 1) Na_2HPO_4
- 2) Na_3PO_4
- 3) H_3PO_4
- 4) NaH_2PO_4

21 Հետևյալ նյութերից որո՞նք կվերացնեն ջրի ընդհանուր կոշտությունը.

- | | | |
|---------------|---------------|-----------|
| w) Na_3PO_4 | q) Na_2CO_3 | t) $NaCl$ |
| p) $NaOH$ | r) $NaNO_3$ | |

- 1) w, q, t
- 2) p, r, t
- 3) w, p
- 4) w, q

22 Ω՞րն է լաբորատոր պայմաններում ծծմբային գազի ստացման ռեակցիայի հավասարման ձախ մասի ուրվագիրը.

- 1) $CuS + O_2 \rightarrow$
- 2) $H_2S + O_2 \rightarrow$
- 3) $FeS_2 + O_2 \rightarrow$
- 4) $Cu + H_2SO_4(\text{լույս}) \rightarrow$

23 Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների ուրվագրերի ձախ և աջ մասերը.

Ձախ մաս	Աջ մաս
w) $SiO_2 + Na_2CO_3 \xrightarrow{t} \dots$ p) $SiO_2 + Mg_{(\text{ալիգուլ})} \xrightarrow{t} \dots$ q) $SiO_2 + HF \rightarrow \dots$	1) $MgO + SiO$ 2) $MgO + Mg_2Si$ 3) $SiF_4 + H_2O$ 4) $Na_2SiO_3 + CO_2$ 5) $SiH_4 + OF_2$ 6) $Na_2SiO_3 + CO$


Ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ.

- 1) w6, p2, q5
- 2) w4, p2, q3
- 3) w4, p2, q5
- 4) w6, p1, q3

24 Ω՞ր արտադրությունն է զբաղվում ալկալիական մետաղների ստացմամբ.

- 1) ջրամետաղարտադրություն
- 2) հիդրոէլեկտրամետաղարտադրություն
- 3) հրամետաղարտադրություն
- 4) էլեկտրամետաղարտադրություն

25 Որո՞նք են փոխարկումների տրված շղթայում X_1 և X_2 նյութերը.




- 1) Cl_2 և KCl
- 2) HCl և Cl_2
- 3) Cl_2 և Fe
- 4) HCl և KCl

26 Նորմալ պայմաններում ո՞ր նյութի մոլեկուլների միջև են փոխազդեցության ուժերն ամենաբույլը.

- 1) CH_3COOH
- 2) H_2O
- 3) CO_2
- 4) C_2H_5OH

27 Ո՞ր շարք է ներառված փոխարկումներն իրականացնելու համար անհրաժեշտ ազդանյութերի բանաձևերի ճիշտ հաջորդականությունը.



- 1) H_2 , H_2SO_4 , HCl , KOH
- 2) H_2O , SO_3 , $NaCl$, $NaOH$
- 3) O_2 , H_2SO_4 , $BaCl_2$, KOH
- 4) O_2 , SO_3 , HCl , H_2O

28 Ո՞ր շարք ներառված իոնները կարելի է լուծույթում հայտաբերել համապատասխան գունավոր նստվածքների առաջացմամբ.

- 1) Ca^{2+} , Br^- , K^+
- 2) Na^+ , Al^{3+} , OH^-
- 3) CO_3^{2-} , Ba^{2+} , NO_3^-
- 4) Cu^{2+} , Fe^{3+} , Ag^+

29 Ո՞ր մետաղի նիտրատի քայլայման արգասիքներում է մեկ գազային նյութ պարունակվում.

- 1) կալցիում
- 2) արծաթ
- 3) նատրիում
- 4) պղինձ

30 Ալկինի խտությունն ըստ ֆոռաջրածնի 2,7 է: Որքա՞ն է այդ ածխաջրածնի 108 գ նմուշի զբաղեցրած ծավալը (լ) 330 Կ ջերմաստիճանի և 166 կՊա ճնշման պայմաններում ($R = 8,3 \text{ } \Omega/\text{Կ} \cdot \text{մոլ}$).

- 1) 33
- 2) 20
- 3) 40
- 4) 24

31 Հետևյալ բանաձևերով նյութերից որո՞նք են մեթանի հոմոլոգներ.

- | | | | |
|---------------------------------|---------------------------------|------------------------------|---------------------------------|
| ա) C_6H_6 | գ) $\text{C}_{10}\text{H}_{22}$ | ե) C_5H_{10} | ի) C_3H_8 |
| թ) $\text{C}_{13}\text{H}_{28}$ | դ) C_2H_2 | շ) C_7H_8 | ը) $\text{C}_{10}\text{H}_{18}$ |
-
- 1) բ, դ, ե
 - 2) ա, զ, ե, զ
 - 3) բ, զ, է
 - 4) ա, զ, է, ը

32 Օրգանական նյութերի տարրեր դասերի հետևյալ գույզերից որո՞նք են իզոմերներ.

- 1) կարբոնաթթուն և էսթերը
- 2) միատոմ սպիրոտը և էսթերը
- 3) ալկաղիենը և ալկենը
- 4) ալկանը և ցիկլոալկանը

33 Ω° նյութն է մրջնաթթվի և 3-մեթիլբութանոլ-1-ի էսթերացման արգասիքը.

- 1) պենտիլֆորմիատ
- 2) իզոպենտիլֆորմիատ
- 3) բութիլֆորմիատ
- 4) իզոպենտիլացետատ

(34-35) Տրված է փոխարկումների հետևյալ շղթան.



34

Որքա՞ն է X_1 , X_2 , X_3 օրգանական միացություններում ջրածնի ատոմների զումարային թիվը.

- 1) 7
- 2) 10
- 3) 3
- 4) 5


35

Ի՞նչ հիբրիդային վիճակում են գտնվում ածխածնի ատոմները X_3 -ի մոլեկուլում.

- 1) sp և sp^2
- 2) sp^3
- 3) sp^3 և sp^2
- 4) sp և sp^3

36


Ո՞ր կարող է լինել X նյութը հետևյալ ուրվագրով փոխարկման մեջ.



- 1) էթանոլ
- 2) էթանալ
- 3) մեթանոլ
- 4) մեթանալ

37

Հետևյալ բանաձևերով միացություններից որո՞նք են ջրածնային կապեր առաջացնում.



1) a, դ, ե, զ

2) զ, դ, ե, է

3) a, բ, ե, է

4) բ, զ, գ, է

38

Ո՞ր շարքի բոլոր նյութերին է բնորոշ ածաթահայելու ռեակցիան.

1) զյուկող, էթիլացետատ, էթանալ

2) ֆրուկտոզ, նատրիումի ֆորմիատ, մեթանալ

3) բենզոլ, մեթանալ, մեթանոլ

4) մեթանալ, մեթանաթթու, մեթիլֆորմիատ

39

Ո՞ր զույգ ներառված ճարպաթթուները կարելի է միմյանցից տարբերել բրոմաջրով.

1) օլեինաթթու և լինոլենաթթու


2) պալմիտինաթթու և լինոլաթթու

3) ստեարինաթթու և պալմիտինաթթու

4) օլեինաթթու և լինոլաթթու

40

Ո՞ր միացության և ամինաթթվի փոխազդեցությունից կստացվի էսթեր, որի Mr-ը 28-ով մեծ է ամինաթթվի Mr-ից.



41

Կալիումի նիտրատի լուծելիությունը 58°C ջերմաստիճանում $110 \text{ g} \cdot \text{L}^{-1}$ է 100 g ջրում, իսկ 5°C ջերմաստիճանում՝ 20 g : Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի նիտրատ կբյուրեղանա 735 գ զանգվածով հազեցած լուծույթից, եթե ջերմաստիճանը 58°C -ից իջեցվի մինչև 5°C :

42

Քացախաթթվի լուծույթում պարունակվում են թթվի $9,8 \cdot 10^{19}$ թվով չդիտցված մոլեկուլներ և գումարային $4 \cdot 10^{18}$ թվով հիդրօքսոնիում և ացետատ իոններ: Որքա՞ն է քացախաթթվի դիտցման աստիճանն այդ լուծույթում (%):

43

Մեկ հազեցած կարբոնաթթվի ճարպի $16,12 \text{ g}$ նմուշի հիդրոլիզից ստացվել է $1,84 \text{ g}$ 1,2,3-պրոպանտրիոլ: Որքա՞ն է ատոմների ընդհանուր թիվը ճարպի մոլեկուլում:

44 Մեկ լիտր տարողությամբ փակ անոթում տաքացման պայմաններում տեղավորել են 2 մոլ ամոնիակ: Որոշ ժամանակ անց համակարգում ստեղծվել է հավասարակշռություն, և ճնշումն անոթում մեծացել է 1,25 անգամ: Որքա՞ն է ամոնիակի ծավալային բաժինը (%) ստացված հավասարակշռային խառնուրդում:

45 Որքա՞ն է X մասնիկում նեյտրոնների թիվը ըստ հետևյալ միջուկային ռեակցիայի հավասարման՝



(46-47) Մեթանի և ացետիլենի որոշակի ծավալով (ն.պ.) խառնուրդը լրիվ այրելիս ծախսվել է 89,6 լ (ն.պ.) թթվածին և անջատվել 2088,5 կԶ ջերմություն: 1 մոլ մեթանի այրումից անջատվում է 1045 կԶ, իսկ մեկ մոլ ացետիլենի այրումից՝ 1305 կԶ ջերմություն:

46 Որքա՞ն է մեթանի զանգվածը (q) ելային խառնուրդում:

47 Ի՞նչ զանգվածով (q) զազային խառնուրդ կստացվի ելային խառնուրդի լրիվ հիդրումից:

(48- 49) 16,32 զ ցինկի քլորիդը լուծել են 61,28 զ ջրում և լուծույթը ենթարկել էլեկտրոլիզի իներտ էլեկտրոդներով: Վերջինս դադարեցրել են այն ժամանակ, երբ կաթոդի զանգվածն ավելացել է 1,3 զ-ով, իսկ կաթոդի և անոդի վրա անջատված զագերի ծավալները հարաբերել են ինչպես 2 : 3:

48 Որքա՞ն է էլեկտրոլիզի ենթարկված աղի զանգվածը (մգ):

49 Էլեկտրոլիզի ենթարկված լուծույթում որքա՞ն է ցինկի քլորիդի զանգվածային քածինը (%):

(50- 51) Պայթեցրել են մեթան, արգոն և ավելցուկով թթվածին պարունակող 20 մլ զազային խառնուրդը, որի խտությունն ըստ հելիումի 7,8 է: Համակարգը սկզբնական պայմանների բերելուց հետո մնացել է 12 մլ զազ:

50 Ի՞նչ ծավալով (մլ) թթվածին է պարունակում վերջնական խառնուրդը:

51 Որքա՞ն է արգոնի ծավալային բաժինը (%) ելային խառնուրդում:

(52-53) Բարիումի քլորիդի բյուրեղահիդրատի 61 գ նմուշը մինչև հաստատուն զանգված տաքացնելիս մնացել է 52 գ պինդ մնացորդ: Որոշակի զանգվածով այդ բյուրեղահիդրատի նմուշը լուծել են ջրում և ստացել անջուր աղի 10,4 % զանգվածային բաժնով 1կգ լուծույթ:

52 Որքա՞ն է բարիումի քլորիդի 1 մոլ բյուրեղահիդրատում բյուրեղաջրի քանակը (մոլ):

53 Որքա՞ն է լուծույթ պատրաստելու համար օգտագործված բյուրեղահիդրատի զանգվածը (գ):

(54-55) Կազմեք (1 մոլ) $P \rightarrow P_2O_5 \rightarrow K_3PO_4$ փոխարկումներին համապատասխանող ռեակցիաների հավասարումները:

54 Որքա՞ն է օքսիդավերականգնման ռեակցիայի ընթացքում ծախսված օքսիդիչ նյութի ծավալը (լ, ն.պ.):

55 Որքա՞ն է չեղոքացման ռեակցիայի ընթացքում ծախսված 28 % զանգվածային բաժնով ալկալու լուծույթի զանգվածը (գ):

- (56-58) Միացություններում +2օրսիդացման աստիճանը ցուցաբերող A մետաղի թիթեղն ընկղմել են պղնձի(II) սուլֆատի 10 % զանգվածային բաժնով 160 գ լուծույթի մեջ: Երբ թիթեղը հանել են լուծույթից, պարզվել է, որ նշանակած աղի զանգվածը լուծույթում պակասել և դարձել է 6,4 գ, իսկ թիթեղի զանգվածը պակասել է 0,06 գրամով:

56 Որքա՞ն է փոխազդած A մետաղի զանգվածը (մգ):

57 Ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 10 % զանգվածային բաժնով լուծույթ է անհրաժեշտ, որպեսզի առաջին փոխարկման արդյունքում ստացված լուծույթի մշակումից առաջանա առավելագույն զանգվածով նստվածք:

58 Նվազագույնը ի՞նչ զանգվածով (գ) կալիումի հիդրօքսիդի 8 % զանգվածային բաժնով լուծույթ է անհրաժեշտ, որպեսզի առաջին փոխարկման արդյունքում ստացված լուծույթի մշակումից առաջանա միայն մեկ նյութի նստվածք:

(59-61) Կալիումի, նատրիումի և պղնձի նիտրատների 13,81 գ խառնուրդը, որում նատրիումի ասումների թիվը 4 անգամ մեծ է կալիումի ասումների թվից, շիկացրել են մինչև հաստատուն զանգված: Սուացված զազային խառնուրդը քրիմիզով անցկացնելիս զազային խառնուրդի ծավալը կրծատվել է 6 անգամ, և սուացվել է 3 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթ:

59 Որքա՞ն է պղնձի նիտրատի մոլային բաժինը (%) սկզբնական խառնուրդում:

60 Որքա՞ն է 3 % զանգվածային բաժնով ազոտական թթվի լուծույթի զանգվածը (գ):

61 Ի՞նչ ծավալով (մլ, ն. պ.) NO₂ պետք է ավելացնել զազային խառնուրդին՝ այն ամ բողջությամբ ազոտական թթվի փոխարկելու համար:

(62-64) Մեթիլ- և էթիլամինների խառնուրդը լրիվ այրել են անհրաժեշտ ծավալով օդում:
Ստացված զազագոլորշային խառնուրդը անհրաժեշտ քանակությամբ
նատրիումի եիղրօքսիդի 8 մոլ/լ կոնցենտրացիայով 1 լ լուծույթի միջով
անցկացնելիս վերջինիս զանգվածն ավելացել է 329 գրամով, և ստացվել է չեղոք
աղ:

62

Որքա՞ն է ամինների ելային խառնուրդի զանգվածը (q):

63

Ի՞նչ ծավալով (լ, ն.պ.) օդ է պահանջվում ելային խառնուրդն այրելու համար:

64

Որքա՞ն է ստացված չեղոք աղի զանգվածը(q):

(65-67) Կալցիումի կարբիդի և մագնեզիումի սուլֆիտի որոշակի զանգվածով
խառնուրդի նմուշը մշակել են անհրաժեշտ քանակությամբ 36,5
% զանգվածային բաժնով՝ աղաթթվով, որի ընթացքում ստացվել է ըստ
եելիումի 11,25 հարաբերական խտությամբ գազային խառնուրդ և լուծույթ, որի
գոլորշացումից մնացել է 51,5 գ պինդ մնացորդ:

65 Որքա՞ն է կալցիումի կարբիդի և մագնեզիումի սուլֆիտի խառնուրդի զանգվածը
(գ):

66 Որքա՞ն է ստացված գազային խառնուրդում օրգանական նյութի ծավալային
բաժինը (%):

67 Ի՞նչ զանգվածով(գ) աղաթթու է ծախսվել պինդ նյութերի ելային խառնուրդը
մշակելու համար:

68 Համապատասխանեցրե՛ք ռեակցիայի հավասարումը և դրա անվանումը.

Հավասարում	Անվանում
w) $C_6H_{12}O_6 \rightarrow 2C_2H_5OH + 2CO_2$	1) կաթնաթթվային խմորում
p) $(C_6H_{10}O_5)_n + n H_2O \xrightarrow{H_2SO_4} nC_6H_{12}O_6$	2) դեհիդրատացում
q) $C_6H_{12}O_6 \rightarrow 2CH_3 - CH(OH) - COOH$	3) հիդրոլիզ
η) $6CO_2 + 6H_2O \xrightarrow{hv} C_6H_{12}O_6 + 6O_2$	4) ֆոտոսինթեզ 5) հիդրում 6) սպիրտային խմորում

69 Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը նյութերի հատկությունների վերաբերյալ.

- 1) PbO_2 , $H_2SO_4(\text{իիտ})$ նյութերը օքսիդացման–վերականգնման ռեակցիաներում հանդես են զալիս միայն որպես օքսիդիչ:
- 2) Ամոնիակի և քլորաջրածնի փոխազդեցությունը և՝ համասեռ, և՝ օքսիդացման–վերականգնման ռեակցիա է:
- 3) Թթվածին, ֆոտոր, ազոտ, քլոր նյութերից ամենաուժեղ օքսիդիչն է ֆոտորը:
- 4) Cu , H_2O , SO_2 նյութերը կարող են ենթարկվել ինքնաօքսիդացման–ինքնավերականգնման:
- 5) MnO_2 -ի առկայությամբ 490 գ կալիումի քլորատի քայլայումից ստացվում է 134,4 լ (ն. պ.) թթվածին:
- 6) $^{235}_{93}Np \rightarrow ^{235}_{94}Pu + \dots$ միջուկային ռեակցիայում բաց թողած մասնիկը պրոտոնն է:

70

50 գ օլեումը չեղոքացնելու համար ծախսվել է նատրիումի հիդրօքսիդի 20 % զանգվածային բաժնով 214գ լուծույթ։ Հաստատե՛ք կամ հերքե՛ք պնդումների ճշմարտացիությունը խնդրի վերաբերյալ։

- 1) Օլեումի 25 գ նմուշը չեղոքացնելու համար պահանջվել է 50 գ 20 % զանգվածային բաժնով նատրիումի հիդրօքսիդի լուծույթ։
- 2) Օլեումի 25 գ նմուշից ծծմբական թթվի 9,8 % զանգվածային բաժնով լուծույթ պատրաստելու համար պետք է ավելացնել 100 գ ջուր։
- 3) Օլեումի տված նմուշը պարունակում է 39,2գ ծծմբական թթու։
- 4) Օլեումի տված նմուշում SO_3 զանգվածային բաժինը 21,6 % է։
- 5) Օլեումի տված նմուշը պարունակում է 0,135 մոլ SO_3 ։
- 6) 50 գ օլեումի վրա 2,43 գ ջուր ավելացնելիս կստացվի անջուր ծծմբական թթու։